ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Լենտեքս ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	Լենտեքս	Լենտեքս ՍՊԸ	Շապիկ՝ անթև և կիսավարտիք, բամբակյա Լրակազմը բաղկացած է անթև շապիկից և կիսավարտիքից: Բամբակյա շապիկ /մայկա/ ՏՊ- 26085-84: Շապիկը՝ ուղիղ ձևացքով, առանց թևերի, կլոր վզով և թևերի լայն բացվածքով: Արտադրվում է 100% բամբակյա պաշտպանական գույնի գործվածքից, 1մ2 քաշը՝ 170- 180գր, թույլատրելի շեղումը՝ 3%: Շապիկի վզատեղը բարձր ձևացքով: Շապիկի փեշերը՝ ծալված, զարդակարված, կրկնակի կարով, վզատեղի և թևերի բացվածքները՝ մշկված են նույն բաղադրության 1+1 գործվածքի 1 սմ մանժետով: Արտաքին տեսքը՝ համաձայն ներկայացվող նմուշի: Շապիկի մեջքամասի վերին եզրին փակցվում է չափս-հասակի պիտակ: Արտադրվում են 42/3-64/5 չափս-հասակի: Բամբակյա կիսավարտիք: Կիսավարտիքի գործվածքը տրիկոտաժե, բաղադրությունը 95% բամբակ, 5% էլաստան, 1մ2 մակերասային խտությունը ոչ պակաս 170գր, կանաչավուն կամ սև գույնի: Բաղադրության, քաշի թույլատրելի շեղումը 4%: Կիսավարտիքը կազմված է առաջամասից, ետնամասից և շեքամասից: Միացման կարերը՝

			կրկնակարերով /ավերլոկ/: Առաջամասի մեջտեղում՝ վերևից ներքև դեպի շեքամասը մշակված է կրկնակի տրիկոտաժե գործվածքով՝ մեջտեղում լայնությունը 9 սմ առանց զարդակարի՝ ուղիղ կարով: Փողքերի ներսի ծալվածքը 2 սմ, եզրագծված 4-5 մմ լայնությամբ կրկնակի զարդակարով: Կիսավարտիքի վերին եզրը ներսից /փակ տեսակի/ մշակված է 2սմ լայնությամբ էլաստիկ ժապավենով: Կողքերից՝ գոտկատեղի վերին եզրից մինչև փողքի ներքին եզրը, սկսած 48 չափսից, պետք է լինի ոչ պակաս 29 սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 1սմ: Գոտկատեղը բացված վիճակում հավասարեցնելով կիսավարտիքի միջնամասի լայնության հետ, սկսած 48 չափսից պետք է լինի ոչ պակաս 38 սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2 սմ: Շեքամասի լայնությունը բացված վիճակում 6.5 սմ, իսկ երկարությունը՝ 17 սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 0.5 սմ: Փողքի ներքևի եզրի լայնությունը սկսած 48 չափսից պետք է լինի ոչ պակաս 20 սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 1 սմ: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը մինչև 4%: Կիսավարտիքի ներսի կարի տակից կարվում է չափսի ստուգիչ պիտակ: Արտաքին տեսքը՝ համաձայն ներկայացվող նմուշի: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ՝ մինչև 100 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 լրակազմ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը արտադրման ամիսը և տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Лентекс в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏվ-ԷԱՃԱՊՁԲ-25/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
2			